

- 3 Յերուսաղէմ՝ Սուրբ՝ լուրս եհաս տոմսիւ,
Գօրիգոր Պատրիարգ՝ հանդերձ իւր Ուխտիւ
Պաշարեալ լինէր՝ տպշտիւր ահիւ,
Ի՛ անտի ի Պօլիս՝ ժամանէր գանձիւ:
- 4 Ո՛ւր դադար կալեալ՝ հընարէր ըզճար,
Կարի վաստակօք՝ մրտօք կամակար,
Ի դերեւ հանել՝ զըրպարտից գումար,
Վանել վատ Յունաց՝ պահանջմանց զոյժ չար:
- 5 Որում եւ ազգ մեր՝ յաւէտ բարերար,
Ընդ Պատրիարգին՝ Յօհաննու ցանկայր,
Գըտանիլ նրպաստ՝ դործով օգտակար,
Բանիւ համաձայն՝ ոսկւով անհամար:
- 6 Յայս գործ եւ Յակօբ Վարդապետ՝ Նալեան,
Իւ հայր իմ՝ Սարգիս բաբուն Սառաֆեան,
Իւ այլք ի ռաբբեաց՝ իւրեանց դասատան,
Ո՛չ սակաւ օգնիչ է՝ աշխատող գըտան:
- 8 Անդ էր տեսանել սատան Յունաց պար,
Թե զի՞ ընդդէմ մեր՝ մրցէր չարաչար,
Յայտնի սրտութեամբ՝ դաւով անդադար,
Սըփռեալ այսր եւ անգր՝ զոսկի եւ գոհար:
- 9 Իսկ բազուկ Հայոց՝ Յունաց յաղթահար,
Ո՛չ տիգաւ, սրբով՝ որպէս ի շատ դար,
Այլ՝ պարզ իրաւամբ եւ փաստիւ արդար,
Զամօթի հարէր՝ զօհեւէնս անարդար:
- 10 Այսուիկ հասանէր վէճն այն ի կատար,
Հայն յաղթէր Յունաց՝ ի բուն նոցին վայր,
Անդրէն հաստատեալ հրովարտակ, յետ կար,
Որով Սուրբ Յակօբ՝ առ Հայս միշտ մընայր: